

Հ. ԽԱՆԲԱՐՅԱՆ

~~ՀԳ-10~~
~~236a~~

ՅՈՒԼԸ

ՅԵՎ

ՆՐԱ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

—

636

Խ-22

ԳՅՈՒՂԷՐԱՑ

1935

ՅԵՐԵՎԱՆ

Арм.
3-1548a

Կ. ԽԱՆԲԱԲՅԱՆ

30 JUL 2010

636

Խ-22

Յ Ո Ւ Լ Ը

ՅԵԿ

ՆՐԱ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Г.П.Б. в ЛНГР
А. 1935 г.
Ак. № 75

Инв. № 5981

ԳԾՈՒՂԷՐՈՏ

1935

ՇԵՐԵՎԱՆ

06 MAY 2013

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՆՇԱՆԱ- ԿՈՒՅՅՈՒՆԸ

Անասունների հոտի վերարտադրության և անասնապահության վերելքի համար կիրառվող կարևորագույն միջոցառումներից մեկը գուլգավորման կամպանիայի ճիշտ կազմակերպումն է:

Զուլգավորման աշխատանքները վատ կազմակերպելու և նաեւրը համապատասխան քանակի ու վորակի ցուլերով չապահովելու հետեանքով, մեր խորհրդային և կոլեկտիվ մի շարք տնտեսութլուններում, անցյալ տարի տավարի ստերջութլունը 25—30 տակոսի յեր հասնում: Ստերջութլան ավելի մեծ տակոս գոյութլուն ունի անհատական սեկտորում:

Հայաստանում այնպիսի գյուղեր և շրջաններ են յեղել, վորտեղ վոչ մի ցուլ չի յեղել, կամ յեղածները ցածրորակ են յեղել: Պարզ է, վոր այսպիսի գյուղերում տավարի վորակի լավացման և ստերջութլան վերացման մասին խոսք չի կարող լինել:

Մեղրյերկոմի 1934 թվի հունվարյան պլենումն անասունների գուլգավորման կամպանիային այնքան կարևորութլուն է տալիս, վոր այդ գործի պատասխանատվութլունը շրջաններում դնում է շրջգործկոմների նախագահների, իսկ խորհրդային տնտեսութլուններում՝ գիրեկտորների վրա:

Նույն պլենումի վորոշմամբ բոլոր գյուղերում հասարակական անասունների գուլգավորման կայաններ պետք է հիմնել և ապահովել ցուլերով:



5366 87

Անդրյերկոմի վորոշումից հետո մեր անասնապահական առաջավոր շրջանները կազմակերպել են հասարակական անասունների զուգավորման կայաններ, ապահովելով այն համապատասխան ցեղի ցուլերով, ցուլիկներով և ուժեղ ու ծավալային կերով:

Յեւ ահա այս վայրերում (Ստեփանավան, Ղարաքի-
խա, Թալին, Սիսիան և այլն), վորոշ բացառութիւններով, զուգավորման պլանները կատարել են 100 տոկոսով:

Որինակելի շրջանների կողքին ունենք շրջաններ, ինչ-
պիսին են՝ Ղամարլուն, Ղուրդուղուլին և այլն, վորոնք ցուլակայաններ հիմնելու և զուգավորման պլաններ կատա-
րելու գործում պոչից են գնում:

Այդ գործում յետ մնացած շրջանների և գյուղերի դե-
կավարութիւնը բոլշևիկյան համառությամբ պետք է գործի շփի, վորպեսզի թույլ չտրվի, վոր իրենց գյուղի կամ շրջանի կովերից վորևէ մեկն անսերունդ մնա:

ԻՆՉ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ Ե ԸՆԹԱՆՈՒՄ ՄԵՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՎՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Անասնաբուծութեան վերելքը կազմակերպելու և նրա պրորելեմը լուծելու համար տավարի քանակական աճի հետ միասին անհրաժեշտ է նկատի ունենալ և ապահովել նրա վորակի բարելավումը:

Մեր տավարի վորակական բարելավումը կամ մթե-
րատվութեան բարձրացումը պետք է կատարել յերկու մի-
ջոցով՝ նրան լավ կերակրելով ու լավ խնամելով, իսկ հետո
նրա վորակը բուժման միջոցով լավացնելով:

Լավ կերակրելն ու խնամքը պահանջում են կերի հաս-
տատուն բազա, լուսավոր, կուլտուրական գոմեր և բարե-
խիղճ ու խելացի վերաբերմունք գեպի անասունները:

Բայց միայն կերակրելու ու խնամելու միջոցով հնա-
բավոր չի ցանկացած բարձրութեան հասցնել տավարի ար-

տադրող սկանութիւնը: Վերջինի համար անհրաժեշտ է բա-
րելավել նաև տավարի ժառանգական հատկութիւնները,
իսկ սա կատարվում է բուժման տարբեր ձևերի միջոցով:
Մեր կուսակցական և կառավարական վերադաս օրգանների
վորոշման համաձայն, Հայաստանի տեղական տավարի բա-
րելավումը պետք է կատարվի գլխավորապես մետիսացման
և դրան զուգընթաց «ինքն իրեն մեջ» բուժելու յեղանակով:


Անասունների սեխացման եյուրյունն այն է, վոր
բարձր ժառանգական հատկութիւններ ունեցող, մթերա-
տու ցեղի կենդանիները (շվից, սիմենտալ) զուգավորվում
են տեղական ցեղի կենդանիների հետ և դրանով բարձրաց-
նում սրանց հետագա սերունդների մթերատվութիւնը:
Մետիս կոչվում է այն կենդանին, վորն առաջացել է յեր-
կու տարբեր ցեղերին պատկանող կենդանիների զուգավո-
րումից:

Հայաստանի տեղական տավարի նկատմամբ վորպես
լավացնող բնդունված է շվից ցեղը, իսկ սիմենտալ ցեղը,
վորպես այգալիսին, առայժմս բուժվելու յե այն վայրերում,
վորտեղ նա տարածված է: Մետիսացման համար լավ տե-
սակի շվից ցուլեր ներմուծում ենք արտասահմանից և
Խորհրդային Միութեան տոնական տնտեսութիւններից:

Այս բացը մասամբ լրացնում է նաև Լոռու մեր տոն-
ական տնտեսութիւնը, վորը, բացի գտարյուն ցուլերից,
ունի նաև գտարյուն և բարձրարյուն կովեր: Այստեղից
ստացված ու դաստիարակված գտարյուն և բարձրարյուն
շվից ցուլերը տրվում են Խորհրդային յեւ կոլեկտիվ այլ
տնտեսութիւնների կաթնապրանքային ֆերմաներին:

ԻՅԷԸ իրենով բուժելու եյուրյունն այն է, վոր բն-
տրում են միևնույն ցեղի լավագույն կենդանիներին և զու-
գավորում են իրար հետ: Այսպես, որինակ, մեր տեղական
«Ղազախ» տավարը, տեղական մյուս տավարի հետ համե-
մատած, ավելի բարձր արտադրողականութիւն ունի: Ըն-

արելով այդ տավարի սերնդից ավելի կաթնառատ, յուղա-
տու և մսատու կովեր, և բարձր ժառանգական հատկու-
թյուններ ունեցող ցուլեր, մենք զուգավորում ենք զբանց
իրար հետ: Դրանով բարձրացնում ենք սերունդների ժա-
ռանգական հատկությունները: Բայց բոլոր պայմաններում
ևլ բարձր ժառանգական հատկություններ ունեցող կենդա-
նիկները բարձր արտադրողականութուն չեն հայտաբերի-
չքա համար անհրաժեշտ է, վոր կենդանիները լավ կերի
և խնամքի պայմաններում գտնվեն:



Սեմյոնովկայի խորհրդային տնտեսության ՎԽՍՍ Սանտա կոչված
Ղազախիցի 7 տարեկան ցուլը:

Հետևապես մետիսացման և ինքն իրեն մեջ բուծելու
միջոցով առաջացած կովերի իրական արտադրողականու-
թյունը հայտաբերելու համար անհրաժեշտ է նրանց կա-
նանավոր կերպով կերակրել և խնամել, հակառակ դեպքում
նրանք իրենց ծնողների հետ համեմատած զգալի բարելա-
վում չեն կարող ձեռք բերել:

Կենդանիների ժառանգական հատկությունները պար-
զելու համար անհրաժեշտ է իմանալ և՛ նրանց նախնի-
ների մթերատվութունը: Սերունդների ժառանգական հա-
տկությունները բարձրացնելու համար պետք է լավ իմանալ

ծնողների և հեռավոր նախնիների հատկությունները, իսկ
զա, առանց կանոնավոր կադմակերպված գրանցումների,
դժվար է լինում: Բուծման բոլոր ձևերի ժամանակ անհրա-
ժեշտ է ձիշտ կերպով զբանցել, հաշվի առնել բուծվող
կենդանիների կաթնարտադրողականութունը, կաթի միջի
յուղի $\frac{1}{10}$ -ը, զուգավորումների և ծնելու ժամկետները: Ա-
ռանց զբան լավ ժառանգական հատկություններ ունեցող
կենդանիների հայտաբերումը և ընտրությունը, հետևապես
նրանց սերնդի հատկությունների լավացման գործը հա-
րավոր չի լինի:

Այս աշխատանքներն իր բարձրության վրա դնելու
համար մոտ յերկու տարի յե, ինչ Խորհ. Հայաստանում տոհ-
մական խորհուրդ է կազմակերպվել:

Ինչպես տեսնում ենք, բուծման յերկու յեղանակների
դեպքում էլ, ցուլը վճռական դեր է կատարում անասուն-
ների ցեղի բարելավման գործում:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ԼԻՆԻ ՑՈՒԼԸ

Սերունդ տալու տեսակետից ցուլն ավելի խոշոր դեր
է կատարում, քան թե կովը: Կովն իր ամբողջ կյանքի ըն-
թացքում տալիս է մի քանի՝ 10—12 հորթ, այն ինչ ցուլի
տված սերունդը հարյուրների յե հասնում:

Ցեթե սրան ավելացնենք և այն, վոր բուծման միջո-
ցով ցուլի, ինչպես և կովի թե զբաղան և թե բացասական
հատկանիշները սերունդներին են անցնում, պարզ էլինի,
թե ցուլերի ընտրությունը վորքան ուշադիր և զգուշ պետք
է կատարել:

Ցուլի արտաքին հատկանիշները. — Ցուլը պետք է ունե-
նա առողջ, հաստատուն և համաչափ կազմվածք. նրա մեջքը
պետք է լինի ուժեղ ու լայն: Այն ցուլը, վորի մեջքը
թամբած է, լավ չի կարող զուգավորել և մեջքի այդ կա-
ռուցվածքը հաճախ հաջորդ սերունդներին է անցնում:

կովի վրա թեթև կերպով թռչելու, իր ամբողջ ուժը նրա վրան չզցելու, նրան չփչացնելու համար, ցուլի գավակը չպետք է թույլ լինի:

Կովերին հեշտ զուգավորելու համար ցուլի հետևի վոտները չպետք է դուրս կամ ներս ընկած, ծոված լինեն, հակառակ դեպքում թռչելիս հետևի վոտքերը չեն կարող դիմանալ մարմնի ծանրությունը և ընկնելով կովի վրա նրան կվնասի:

Յուլը պետք է աշխուժ և համարձակ լինի, բայց վոշ կատաղած: Յուլի ամորձիքները պետք է լինեն ուժեղ և լավ զարգացած, սակայն վոշ կախ ընկած: Խնչ խոսք, վոր ցուլը պետք է ունենա նորմալ գիրություն և առողջ մարմնակազմ:

ՅՈՒԼԻ ՎՈՐԱԿԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՏԿԱՆԵՇՆԵՐԸ

Յուլի ծագումը.—Արտաքին նշաններով հնարավոր չե ցուլի վորակը և նրա հատկությունները լրիվ կերպով վորոշել: Յուլի հատկությունները վորոշելու համար լուրջ ուշադրություն պետք է դարձնել նրա ծագման վրա:

Կուլտուրական ձևով տարվող անասնաբուծության ժամանակ կովի ծինը, զուգավորումները, կաթնատվության չափը, յուղի տոկոսը և այլ հատկանիշները պետք է գրանցելու միջոցով հաշվի առնել:

Յեթե ցուլն ստացվում է այգալիսի կուլտուրական տնտեսությունից, անհրաժեշտ է ցուլի հետ միասին պահանջել նաև նրա վկայականը: Այդ վկայականում, բացի ցուլին վերաբերվող հարցերից, գրված է լինում նրա ծնողների, պապերի և տատերի արտադրողականությունը, նրանց կաթնատվությունը, յուղատվությունը և այլն:

Այգալիսի պաշտոնական վկայական հեշտությամբ կարելի չէ ստանալ, յեթե ցուլը կամ նրա նախնիները զբանցված են յեղել տոհմական գրքի մեջ:

Պաշտոնական վկայական չլինելու դեպքում և ցուլի նախորդների, աղգակիցների, ինչպես նաև նրա սերունդների մթերատվության մասին պետք է իմանալ յեղած հարց ու փորձի և զանազան գրանցումների միջոցով ու ըստ այնմ յեղրակացնել ցուլի լավ կամ վատ լինելը:

Յուլերին պեժ և փորձել.—Հաճախ և պատահում, վոր հակառակ ցուլերի վերաբերյալ յեղած դրական բոլոր տվյալներին, նախիրը լավացնելու փոխարեն այլասերում են. յերբեմն ևլ այդ ցուլերին կցած կովերը ստերջ են մնում:

Այս դրությունից խուսափելու համար ցուլերին պետք է փորձել, ստուգելով նրանց ժառանգական հատկությունները:

Յուլին իր սերունդների միջոցով ստուգելու համար մեկ ու կես տարեկան հասակից նրան պետք է զուգավորել մի խումբ միատեսակ հատկանիշներ ունեցող կովերի հետ (մոտ 30 կովի), իհարկե փորձի ընթացքում և փորձից հետո նախորդը հաշվի առնելով փորձվող կովերի մթեքանությունը: Յուլը մոտ 5 տարեկան դառնալուց հետո, բառվությունը: Յուլը մոտ 5 տարեկան դառնալուց հետո, յերբ նրա աղջիկները ծնեն, պետք է հաշվի առնել այդ աղջիկների կաթնատվությունն ու կաթի յուղի $\frac{0}{100}$ -ը, աղջիկների կաթնատվության մեջ գնելով մայրերի առաջին ծնի վորը համեմատության մեջ գնելով մայրերի առաջին ծնի կաթի և յուղի $\frac{0}{100}$ -ի հետ, կարելի չէ մոտավորապես յեղրակացնել, թե այդ ցուլը ժառանգների հատկությունները լավացնող է, թե վատացնող: Յեթե լավացնող է, պետք է նրան հետագայում ոգտագործել, իսկ յեթե հոտն այլասերում է, պետք է նրան խոտանել:

Այս յերկրորդ տարին է, ինչ Լոռվա գոնալ կայանում այգալիսի փորձեր են կատարվում: Մեր լավագույն խորհրդային տնտեսությունները և կաթնապրահային ֆերմաները պետք է զբաղվեն այս խնդրով:

Լոռվա տոհմական տնտեսությունն ունեք սիմենտալ ցուլի «Հանա» անունով մի հուշակավոր ցուլ, վորն իր համ-

բալով, կենդանի քաշով (72 փութ) և պեղեցկությամբ Հայաստանում իրեն մրցակիցը չունի: Բայց յերբ նա 1933 թ. 7 տարեկան հասակում վոսկրախօից սատկեց, զոտեխնիկները նրա ժառանգների մասին բացասական կարծիք հայտնեցին:

Զուգավորման ժամանակ մյուս կարևոր խնդիրը սերմաբջիջների վորակի, նրանց կենսունակութունը վորոշելու խնդիրն է: Սա կատարվում է մանրադիտակի միջոցով: Յեթե սերմաբջիջները յերևում են շատ, նրանք շարժուն են և կենսունակ, նրանց վորակը լավ է, հետևապես կարող են բեղմնավորել, իսկ յեթե մեղած են, բեղմնավորելու ընդունակութունից զուրկ են և յեթե կովերը այդպիսի սերմաբջիջներ ունեցող ցուլի հուսով թողնվեն, նրանք ստերջ կման:

Սեմյոնովկայի խորհրդային անտեսությունը 1932 թ. այդպիսի անպտուղ գտարյուն շվից ցուլ եր գնել, վորը անտեսության վրա չափազանց թանկ է նստել և սոհմական վոչ մի ոգուտ չի տվել: այժմ այդ ցուլն ամորձատված է և վորպես յեզ է ոգտագործվում:

ՅՈՒԼԸ ՊԵՏՔ Ե ՊԼԱՆԱՅԻՆ ՑԵՂԻՆ ՊԱՏԿԱՆԻ

Մեզ մոտ շատ հաճախ միևնույն շրջանում, միևնույն գյուղում կամ միևնույն կաթնապրանքային ֆերմայում կողք-կողքի պահում և ոգտագործում են զանազան ցեղի ցուլեր, ինչպիսիք են սիմենտալ, շվից ցեղերը, սրանց մետիսները, տեղական ցուլերը և այլն: Այս այն արդյունքն է առնանում, վոր մի տեսակ շփոթություն է առաջանում և հնարավոր չի լինում վորոշել, թե վերջիվերջո այս կամ այն տավարը վոր ցեղից է և ինչ արյուն ունի: Այս հանգամանքն արգելք է հանդիսանում տվյալ տավարի վրա կանոնավոր ու հետևողական սոհմական աշխատանք կատարել:

Այս հանգամանքի վրա խոշոր ուշադրություն է դարձնում նաև մեր կուսակցությունն ու կառավարությունը: Այժմ գոյություն ունի տավարի ցեղերի շրջանացման պլան՝ ամբողջ ԽՍՀՄ-ի համար: Տավարի ցեղերի այս պլանի համաձայն, համապատասխան շրջանների տավարը պետք է լավացվի համապատասխան ցեղի ցուլերով: Որինակ, ինչպես վերևում հիշեցինք՝ Հայաստանի համար վորպես լավացնող ընդունված է շվից ցեղը, վորոշ տեղերում, ինչպիսին է Ստեփանավանը և այլն, շվիցի հետ միասին՝ նաև սիմենտալը, իսկ Դիլիջանի շրջանում շվիցի հետ միասին՝ նաև Ղազախի տեղական կարմիր ցեղը: Հենց սրանից յելնելով է, վոր մեր համապատասխան շրջանների անտեսությունները պետք է ձգտեն ձեռք բերելու համապատասխան պլանային ցեղի ցուլեր:


Յեթե ծայրահեղ դեպքերում հնարավոր չի լինում պլանային ցեղի ցուլ կամ նրա խառնուրդ ցեղի ցուլ ձեռք բերել, կովերին ստերջ չթողնելու համար, կարելի յե տեղական ցեղի լավագույն ցուլերից միտոժամանակ ձեռք բերել և ոգտագործել:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ ՅՈՒԼԻ ՊԱՇԵԼՈՒ ՏԵՂԸ

Մեր անասնապահական խորհրդային անտեսություններից և կաթնապրանքային ֆերմաներից շատերը ցուլերին կապում են առանձին ցուլանոցներում, իսկ այնպիսիներն ել կան, վորոնք ցուլերն ամրացնում են այս կամ այն բրիգադին և կապում են կովերի կողքին:

Այս վերջին ձևը լավ է վոչ միայն գուգավորման աշխատանքների ճիշտ և հեշտ կազմակերպման տեսակետից, այլև ցուլը կովերի կողքին կապելով նա իրեն շատ ուրախ է զգում, բնավորությունը մեղմանում է և լսող է դառնում: Առանձին ցուլանոցում կապած ցուլն անհանգստանում, հուզվում և կատաղաբար հարձակվում է կովերի վրա:

Նրա մեջ գորգանում են մի շարք անցանկալի սովորություններ, ինչպես որինակ՝ ոնանիզմը:



Սեմյոնովկայի խորհանդեսութեան որոնակելի ցուլանոցը:

Յերե ցուլը կապում է կոճերի հետ միասին մի գոմում, պետք է այդ դեպքում գոմի վորյեվե անկյունում հրան տեղ հասկացնել, փոքրիկ միջնապատով կոճերից անջատել այնպես, վոր ցուլը կոճերին կարողանա տեսնել:

Ցուլը վորտեղ էլ վոր կապված լինի, նայած ցուլի մեծութեանը, նրա տեղը պետք է ունենա 1,3—1,5 մետր լայնութեան և 1,5—1,7 մետր յերկարութեան:

Ցուլի տեղը կամ ցուլանոցը պետք է լինի արևոտ, լուսավոր, տաք և քամու միջանցիկ հոսանքներից ազատ լինի: Ցուլի կանգնելու տեղը, գոմի հատակը պետք է հարթ լինի և առանց խորդ ու բորդութեանների: Խորդ ու բորդութեանների գեպքում ցուլը չի կարողանում հանգստանալ, վորտեղի մկանները լարված են մնում և կարող են վորտեղի տարբեր մասավածքներ առաջանալ: Շատ հարթ, սլիկուն հատակն էլ ցուլի համար անհարմար է, վորովհետև զրկում է ազատ շարժվելու հնարավորութեանից. ցուլը կարող է սայթաքել և վնասվել: Հատակը պիտի լինի տաք, մեղր և կեղտոտութեանները չծծող, գոմի սղր չապականող նյութերից: Լավ են համարվում փայտից (փափուկ է և տաք, բայց մեղի համար թափանցիկ է), տորցից (լավ է, բայց թանգ են ստում), բետոնից (պակասութեանն այն է, վոր սառն է և սլիկուն, շատ ցամքար և պահանջում), ասֆալտից (սլիկուն է) պատրաստած հատակները: Ցուլի կանգնելու տեղը պետք է վորոշ թեքութեան ունենա, վորպէսզի մեղը հեշտութեամբ հոսի գեպի աղբատար առվակը:

ՑՈՒԼԻ ԽՆԱՄԲԸ

Ցուլպահը պետք է լինի հմուտ և փորձված. ցուլերի առողջութեան և սեռական նորմալ գործունեութեան համար, բացի չոր, լուսավոր, արեվոտ և խաղաղ ցուլանոցից, խոշոր նշանակութեան ունի նաև կանոնավոր ինամքը և պահպանումը:

Յուլեիին խնամելու գործը պետք է համաձայն փորձված, համաձայնակ յեմ կայուն բնավորություն ունեցող տնտեսականի, փոքրագույն նա հաշվադր Բոսթոնում կառուցանա ուստեղ ցուլին յեմ սիպել նրան իրեն լսելու:

Յուլապահը ցուլի հետ պետք է շատ խաղաղ, փաղաք-չափան ձևով վարվի: Աղմուկը, աղաղակը, ցուլին վախեց-նելը և նրանից վախենալը փչացնում է ցուլի բնավորու-թյունը, նրան հարու տվող կամ վախկոտ է դարձնում:

Յուլերից շատերն իրենց խնամողին վարժվելու հե-տևանքով անժանոթների հետ շատ ոտար են վարվում: Այս փաստն ասում է հոգուտ այն բանի, վոր ցուլապահին հա-ձախակի չպետք է փոխել: Մեր կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններն այդ կարևոր կանոնները չպահպանելու դեպքում բավական փաս են ստանում:

Ահա մի որինակ.— Սեմյոնովկայի խորհրդային տնտե-սությունն ուներ Որդո անուշով մի փորձված և քարե-խիղճ ցուլապահ: 1933 թվին Որդոն արձակուրդ է գնում, իսկ նրա խնամած ցուլերը հանձնում են 2 վախկոտ և ան-փորձ պատանիների: Արդյունքն այն է լինում, վոր այդ պատանիների անփորձության հետևանքով 2 զտարյուն շվից ցուլերն ել հարու տալ են սովորում և հնարավոր չի լի-նում հետագայում նրանց ոգտագործել:

Նույնն է պատահում նաև Լոռվա խորհրդային տնտե-սության մեջ, յերբ ցուլապահ թաթոս Ավետիսյանին փո-խարինում է մի անփորձ ցուլապահ, վորի հետևանքով հա-րու տվող ցուլը շրջապատի համար վտանգավոր է դառ-նում: Այս յերևույթը ցուլերի հետ մատաղ հասակից սկսած վատ վարվելու և նրանց որերով փողոցներում անտեր-ան-տիրական թափառելու արդյունք է: Յուլը փողոցում թա-փառելիս հաճախ յերեխաները քարերով, փայտով, հարա-յ-քոցով հետևում են նրան, դրա համար ել ցուլի բնավո-րությունը վատանում է. անտեր թափառելիս հաճախ ել նրա յետևից շներն են ընկնում ու վայրենացնում նրան:

Անցյալ տարի Սեմյոնովկայի խորհրդային տնտեսու-թյան № 2 ֆերմայի ցուլերն անտեր-անտիրական ճանա-պահորդում և զանազան տեղերում հյուրընկալվում էին, իսկ այս տարի դրանից ավելի վատ դրուլթյան մեջ են Ար-թիկի շրջանի Հ. Գյոզալդարա գյուղի հասարակական ցու-լերը, վորոնք յերկար թափառումներից հետո 4—5 որով-տոանց կերի ու ջրի այս կամ այն գյուղացու կողմից բանտարկվում «պատժվում» էին: Այս դրուլթյունը վոչ մի դեպքում հանգուրժել չի կարելի:

ՄԱՔՈՒՐ ՊԱՇԵԼ ՑՈՒՆ ՈՒ ՑՈՒԼԱՆՈՑԸ

Մյուս ամենակարևոր պայմանը, դա ցուլերի և ցու-լանցի մաքրության խնդիրն է: Յուլեիի ցակր պետք է հա-ճախ մաքրել. որը 3 անգամ աղբը դուս սանել յեմ հին ու քրջված ցամաքը նուրով փոխառինել: Յուլին պետք է մաք-րել որը 2—3 անգամ: Այն ցուլերը, վորոնք մաքրելու ժամանակ խուտուտ են գալիս, կամ մաշկը գոգավելու պատճառով չեն թողնում մաքրելու, նրանց դուլշուլթյամբ և աստիճանաբար պետք է մաքրելուն վարժեցնել: Մեր կոլ-տնտեսականներից վոմանք ցուլերի մաշկը մաքուր պահե-լու մասին հոգ չեն տանում: Նրանք մոռանում են, վոր ցուլերի կամ այլ անասունների մաշկը կաղմված է բազ-մաթիվ ծակոտիներից, վորտեղից կատարվում է շնչառու-թյունը և քրտնաթորությունը: Յերբ փոշին, կեղտը, մաշկի մեռած բջիջները (մարմնի թեփը) հաճախակի չեն մաք-րում, նրանք քրտինքի հետ շաղախվելով փակում են մաշկի տնցքերը և արգելք հանդիսանում մաշկի կանոնավոր շնչա-ռությունը և քրտնաթորությունը: Բացի դրանից, կեղտո-տություն հետևանքով կենդանու մարմինը զրգովում, ջոր է գալիս և մաշկը հիվանդանում է: Կեղտոտ պահելու պատ-ճառով 33 թվի ամառը Սեմյոնովկայի խորհրդանտեսություն-նում 3 զտարյուն շվից ցուլ մաշկի հիվանդություններ են

հիվանդացել: Այս յերեույթի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է որը 3 անգամ ցուլին մաքրել և թիմարել: Արգելվում է ցուլերին քորիչով (ղաշով) մաքրել: Քորիչը զրգուռում, նույնիսկ չանդուռում է մաշկը. իսկ այդ չանդուռվածքից կարող են անցնել զանազան մանրեներ և այս կամ այն հիվանդություն պատճառ դառնալ: Սովորաբար մաքրելու համար ամենից լավը խոզանակն է, իսկ չորացած կեղաք կարելի չէ մաքրել ծղոտի կամ խոտի վնջով, կամ ավելի լավ է այդպիսի տեղերը գոլ ջրով և սաղսնով լվանալ: Մաքրելու ժամանակ շատ լուրջ ուշադրություն պետք է դարձնել ցուլի ծոծրաչի մաքրության վրա, վորովհետև մաքրելու ժամանակ հաճախ այդ մասը մոռացության է արվում և կեղտի ու վնջի բուն դառնում:

ՅՈՒԼԻՆ ՊԵՏԲ Ե ԶԲՈՍԱՆՔԻ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼ

Ցարվա յեղանակներից անկախ ամեն արեվոտ ու խաղաղ որ ցուլերին պետք է զբոսանքի հանել. իսկ տաք յեղանակներին ցուլերին պետք է տանել այդ նպատակի համար պատրաստած ցանկապատի մեջ և թողնել մինչև յերեկո՝ չմոռանալով նրանց կերակրելն ու խնամքը: Յուլերի առողջության համար զբոսանքը, շարժվելը շատ մեծ նշանակություն ունի: Լավ է մեղմ բնավորություն ունեցող ցուլերից 2—3-ը մի ցանկապատի մեջ թողնել, իսկ կռվաբարներին, իրար վրա թռչողներին յերկար պարաններով ցցերին կապել, կամ թե առանձին-առանձին ցանկապատերի մեջ պահել:

ԹԵԹԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅՈՒԼԻՆ ՈԳՏԱԿԱՐ Ե

Բացի զբոսանքից բարենպաստ կերպով է ազդում ցուլի վրա թեթև աշխատանքը: Այս դեպքում ամրապնդվում են նրա մկանները, սիրտը և թոքերը: Աշխատանքը 2—3 ժամից ավելի չպետք է տևի և ցուլին յերբեք չպետք է հոգ-

նեցնել: Յուլերին կարելի չէ զանազան ձևի աշխատանքներում ոգտագործել:

Լծելիս ցուլերի հետ փաղաքշանքով վարվելու դեպքում նրանք շատ լավ աշխատում և նույնիսկ կատաղի ցուլերն անգամ խելոքանում են:

Արտասահմանի ամեն մի տնտեսության մեջ ընդունված է ցուլերին աշխատեցնելու պրակտիկան: Մեզ մոտ, Սորհրդային Միության մեջ, նույնպես ցուլերին աշխատեցնելն սկսում է լայն ծավալ ընդունել:

Հայաստանի անասնապահական տնտեսությունները պետք է այս փորձն ոգտագործեն: Յուլերին պետք է աշխատանքի սովորեցնել սկսած մեկ ու կես տարեկան հասակից. սկզբում վարժեցնում են յետևից քաշելով, հետո վարժեցնում են լծասարքը հազցնելուն (անուրի և խամուտի կամ լծի), ապա լծելուն:

Յուլերին կարելի չէ լծել սայլակի՝ գույգ-գույգ կամ կենտ: Նայած ցուլերի մեծությանը, նրանցից ամեն մեկին 6—15 փութ բեռ քաշելուց ավելի չպետք է տալ:

Յուլերով կարելի չէ դեպի գամը կեր և ջուր կրել. իսկ գոմից կաթ կամ գոմաղբը տեղափոխել և այլն:

Յերբեք չպետք է մոռանալ, վոր ցուլի հիմնական նպատակը տոհմական աշխատանք տանելն է և չժանրաբեռնել, չհոգնեցնել ցուլին վերոհիշյալ նորմայից մեծ աշխատանքներով:

ՅՈՒԼԵՐԻ ՔԹԻՆ ՈՂ ՊԵՏԲ Ե ԱՆՑԱՑՆԵԼ

Վորպեսզի ցուլն ավելի հանդիստ լինի և կատաղած ժամանակ չըջապատի մարդկանց վրա չհարձակվի, պետք է յերիտասարդ հասակից նրա քթի մեջ ող անցկացնել: Քթում ող ունեցող ցուլերին ավելի հեշտ է սաստել, ինչքան ել վոր նրանք կատաղած լինեն: Ող անցկացնելու տեխնիկան հետևյալումն է կայանում.—

Ցուլը և նրա ոգտագործ



Ողն անցկացնելու համար ցուլի դուլը պետք է ամուր կապել, վորպեսզի նա չկարողանա թափահարել. ապա ձախ ձեռքով պետք է բռնել քիթը, իսկ աջ ձեռքով քթի միջնապատը տրոսկարով ծակել: Տրոսկարի միջուկը խողովակի միջից հանում են, իսկ խողովակը ժամանակավորապես թողնում են քթի միջնապատի մեջ: Այնուհետև տրոսկարի խողովակի մեջ հագցնում են բացված ողի մեծ ծայրը և տրոսկարի խողովակի ողնաթյամբ քաշում, անց են կացնում քթի միջնապատով:

Դրանից հետո տրոսկարի խողովակը հանում են, քթի միջնապատով անց են կացնում պղը, ապա փակում են և վիստով ամրացնում, վորից հետո խարտոցով կամ ապակեթղթով հղկում:

Մինչև վերքի լավանալը, վոր մոտ 10 օր է տևում, ողին չպետք է ձեռք տալ և ցուլի ողից չպետք է քաշել:

Ողն անցկացնելիս թե տրոսկարը, թե ողը, և թե անցկացնող մարդու ձեռները պետք է լինեն շատ մաքուր և ախտահանված:

Ախտահանել նաև ցուլի ռնդները, թե ող անցկացնելուց առաջ և թե հետո: Շատ հարմար է, յերբ ողն անց են կացնում ունեկիով:

ԱՆԿԱՆՈՆ ԿԵՐԱԿՐԵԼԸ ՄԱՀԱՑՈՒ ՀԱՐՎԱԾ Ե ՅՈՒԼԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Խնչպես կաթնատու կովը վատ կերակրվելիս կաթ չի տալիս, կամ հորթը վատ անվելիս վատ է աճում, ճիշտ այնպես էլ ցուլը, յեթե վատ է կերակրվում, աննդարար նյութերով աղքատ կեր է ստանում, այդ դեպքում նրա սերմնաբանությունը բավարար քանակի սերմնաբջջիկներ չեն գոյանում: Սերմնաբջջիկների գոյացումը, նրանց ինտենսիվությունը կախված է ցուլի ստացած կերի քանակից և վորակից: Սակայն փաստակար է նաև ցուլին չափից դուրս

կերակրելը: Շատ առատ կերակրելու հետևանքով ցուլը հարպակալում է յեվ վորպես արսագործ՝ իր արժեքը կորցնում: Հարպակալած ցուլը քմբած է լինում, ցանկություն չի ունենում յեվ նույնիսկ հրաժարվում է կովի վրա բուշելուց. թուշելիս իր ամբողջ ծանուրքյամբ կովի վրա յե ընկնում յեվ հանախ կովին կառմանգամ դարձնում:

Այսպիսով, անկանոն կերակրելու և ոգտագործելու շնորհիվ, ցուլը կարճ ժամանակամիջոցում կորցնում է իր սեռական ունակությունը և բեղմնավորելու համար անպետք է դառնում:

Ահա թե ինչու ցուլերի կերակրման վրա մեր կույեկտիվ և խորհրդային տնտեսություններն ու ցուլակայանները լուրջ ուշադրություն պետք է դարձնեն: Զուգավորվող ցուլը պետք է նորմալ գիրություն ունենա: Ցուլին այնպես կեր պետք է տալ, վորպեսզի նա պատշաճի իր գոյությունը (նորմալ գիրություն ունենա) յեվ վերականգնի զուգավորման ժամանակ կորցրած ենեղիան կամ սեռականեղուկը: Յերիտատարդ, աճող ցուլին, այս բոլորից բացի, աճման համար կերի վորոշ հավելում պետք է տալ:

Չնայած խնդրի լրջությանը, մեր մի շարք կույեկտեսություններ և խորհանտեսություններ ցուլերի ոացիոնալ կերակրման վրա վուշ մի ուշադրություն չեն դարձնում. դուգավորման և վոշ դուգավորման շրջանում նրանց մոտ ցուլերի միակ կերը հարդն ու խոտն է: Հաճախ լծկան անասուններին ուժեղ կեր են տալիս, իսկ ցուլերին չեն տալիս: Խոտը և հարդը, վորով հաճախ միայն կերակրվում են ցուլերը, չեն կարող տալ այն բոլոր աննդանյութերը, ինչ անհրաժեշտ է ցուլին՝ նրա սեռական աշխատանքը, աճումն ու կենսունակությունը նորմալ կերպով շարունակելու համար: Ցուլերի անման յեվ սեռական նսմալ առաջանքի համար սպիտակուցային նյութեր են պահանջ-

վում, վորովհետեւ ցուլերի սերմնանյութը, ինչպես յեւ մարմնի մկանները (միտը) սպիտակուցային նյութերից են գոյանում: Ուժեղ կերի (վարսակ, դարի, քուսպ, թեփ) մեջ սպիտակուցների քանակն ավելի մեծ է, քան թե կուպիս յեւ հյութալի կերի մեջ: Յուլերին կերակրելիս նրանց նամները պէտք է կազմել՝ յեւնելով նրանց կենդանի քաւից, կասարած սեռական աշխատանքից (գուգավորման շրջանն է, թե վոչ) յեւ անումից:

Զուգավորման շրջանում մեծածավալ կերը (հարդ, խոտ) պետք է քչացնել ի հաշիվ ուժեղ կերի: Յուլերի համար ամենալավ կեր են համարվում.—

1. Լավ թիթեռնածաղիկ բույսերի խոտը (առվուշտ, յերեքնուկ և այլն), վորոնք իրենց մեջ ցուլի համար շատ կարեւոր սպիտակուցային և կրային նյութեր են պարունակում: Յուլաբանչյուր ցուլին որական կարելի յե տալ 8—10 կլգ. այսպիսի խոտ:

2. Վարսակ կարելի յե տալ գուգավորման շրջանում որական 3—5 կլգ., իսկ վոչ գուգավորման շրջանում 1—2 կիլոգրամ: Վարսակն արտադրողների համար միակ և անփոխարինելի կերն է:

Վարսակը չափազանց դյուրամարս և սննդարար կեր է. նա ցուլերին աշխուժացնում և սեռական տեսակետից ավելի ուժեղ է դարձնում:

3. Կարելի յե տալ նաև որական 1—3 կիլոգրամ քուսպ, վորը հարուստ է սպիտակուցով, ճարպով և այլ նյութերով: Կարելի յե նաև թեփ տալ:

4. Յուլի վարսողությունը կանոնավորելու և ախորժակը բաց անելու համար շատ բարեբար ազդեցություն ունեն նաև արմատապտուղները, առանձնապես գաղարը: Արտադրող շրջանում ցուլին կարելի յե արածեցնել կամ կանաչ կեր տալ, բայց վորպեսզի ցուլը չուռչի և չթուլանա, արտադրողները պետք է ուժեղ կեր ել տալ:

Ինչպես մյուս անասուններին, այնպես և ցուլին սառած, բորբոսնած և փչացած կեր չի կարելի տալ:

Յուլաբանչյուր կոյսնեստություն յեւ խորհնեստություն, յուլաբանչյուր հասարակական ցուլակայան պէտք է ամեն միջոց ձեռք առնի ցուլերի համար ուժեղ կերի մոնդ տեղծելու յեւ ուսցիոնալ կեւպով կերակրելու համար: Աննորմալ կերակրելը, վաս խնամքն ու ոգսագործելը ցուլերի արտադրողականությանը մահացու հաւրած են հասցնում:

ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ

Զուգավորման աշխատանքը հաջող տանելու համար անհրաժեշտ է ունենալ գուգավորման պլան, վորը կազմելու համար պետք է հաշիվ առնել գուգավորման յենթակամայր կովերի քանակը, արտադրողների քանակը, ցեղը և վորակը:

Զուգավորման պլանը կազմելիս ամեն մի ցուլին, նաւած նրա հասակին, սեռական ընդունակությանը, ցեղական հատկություններին և անտեսության մեջ գործադրվող գուգավորման ձևին (ազատ, ձեռնքաշ),—կցում են համապատասխան թվով կովեր:

Լավագույն կովերին և յերինջներին գուգավորելու համար կցում են լավագույն ցուլեր:

Կովերին պետք է այնպիսի ժամանակ ծածկել, վոր նրանք մեր ուղած ժամանակը ծնեն:

Կոյեկտիվ անտեսությունների կաթնապրանքային ֆերմաները և անասնապահական խորհրդային անտեսությունները գուգավորման պլան կազմելիս պետք է հաշիվ առնեն իրենց բոլոր պայմանները և այնպես դասավորեն գուգավորումները, վոր ծնելու շրջանում ունենան մատղաշների և նորածին կովերի խնամքի և պահպանման հաջող պայմանները:

Լավ կլինի յեթե զուգավորումները և ծինը կատար-
վեն ամբողջ տարվա ընթացքում՝ համաչափ: Զուգավորումը
յեվ ծինն ամբողջ տարվա ընթացքում կազմակերպելու
հնարհիվ հնարավոր է աշխատավորությանն ամբողջ տարին
բարձր կարգի վրա պահել: Այսպիսի
դեպքում հեշտ է կարճ մեակող գործարանների բեռնվա-
ծությունը կանոնավորել, ցույցեր լինել յեվ ռացիոնալ
կերպով ոգստագործել, ծինին մասնաշաղկապ բնույթ չստ-
անալ յեվ հորերը կանոնավոր դաստիարակել:


Այստեղից պարզ է, թե վորքան մեծ դեր է խաղում
կենդանիների համաչափ, կլոր տարին զուգավորելու գործի
կազմակերպումը:

Զուգավորման պլանը և նրա կատարումը այսպես
պիտի լինի.

ԱՅ	Ըստ կարգի
Հովի Առն Քաջուհի	Հովի Առն Քաջուհի
Վերջին ծնի ուր	Վերջին ծնի ուր
Վոր ախարմը	Վոր ախարմը
Վոր բուրմը	Վոր բուրմը
Ցուր ա-	Ցուր ա-
հունը	հունը
Մածկելու	Մածկելու
1-ին որը	1-ին որը
Մածկելու	Մածկելու
2-րդ որը	2-րդ որը
Սպասվում է ճշմ.	Սպասվում է ճշմ.
(ոլը)	(ոլը)
Նախատեսվում է	Նախատեսվում է
կողմն մամուլեցնել	կողմն մամուլեցնել
Փաստորեն պահա-	Փաստորեն պահա-
քել է	քել է
Յերբ ե ծնի կողմ	Յերբ ե ծնի կողմ
Հորթի սեռը	Հորթի սեռը
Մանթութում	Մանթութում
անհաջող ծնի մա-	անհաջող ծնի մա-
րից	րից

Ի՞նչ ՊԵՏԲ Ե ԳԻՏԵՆԱԼ ԶՈՒԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Առաջին գողափորումը կատարել ճիշտ ժամանակին։
Այս խնդիրն առաջին հայացքից շատ հասարակ է թվում,
բայց իրականում նա լուրջ է հմեծ ուշադրության արժանի։



Սիմոնովիայի խորհրդային տնտեսության զտարյուն շփոխճեղքակալություն, ԿԲԲԸ հարուստ ապրանքի և վառ ոգտազորովիլու հետեանքով 1934 թ. զուգափոխման շրջանում 100 և ավելի կով ծածկելու փոխարեն ծածկել և 42 կով:

Հարկավոր է հիշել, թոր ժամանակից շուտ ծածկված
յեվ բեղմնավորված յերիցնները բույլ յեվ վսիս, դանդաղ
անող հորքեր են ծնում: Այսպիսի մայրերի մոտ վիժում-
ները յեվ անհաջող ծինն ավելի հաճախ են պատահում:
Այսպիսի դեպքերը, անասնաբուժի բացակայության դեպ-
քում, կարող են թե կռվի, յեվ թե հորքի մահով վերջանալ:

Ժամանակից շուտ ծնելը նաև այն վնասակար հետե-
վանքն է ունենում, վոր մոր մարմնի զարգացումը (պտուղը
սնելու, իսկ ծնելուց հետո կաթնատվության հետեանքով)
դանդաղում է, կենդանին հաճախ նիհար և թույլ է լինում
և յենթակա՝ զանազան հիվանդություններին՝ վաղ ծնելը

բացասաբար և անդրադառնում նաև կովի կաթնատվության և մատտվության վրա:

Վնասակար և նաև ուշ ծածկելը:

Զնայած այս գեպը ուժ ծնված հորթերն ավելի խոշոր, առողջ են լինում և աճումը լավ է գնում, բայց պատահում են դեպքեր, յերբ ուշ զուգավորվող յերինջները՝ արդանդը ճարպակալելու հետևանքով, այլևս չեն բեղմնավորվում: Իսկ յեթե բեղմնավորվում և ծնում են, նրանց կաթնային գեղձերը ճարպակալած է լինում, վորի հետևանքով կաթնատվությունը ցածր է լինում: Բացի այդ, ուշ զուգավորելը ձգձգում է յերինջների կովերի շարքն անցնելը, վորով և զանգաղում է նախրի աճը: Յուրերին զուգավորման համար ժամանակից շուտ և ուշ ոգտադործելը վատ է անդրադառնում նրանց սեռական աշխատանքի յերկարատևության վրա: Վերսվհետև այդպիսի ցուլերի զարգացումը նորմալ չի գնում, զրա համար ել նրանք շուտ են թուլանում: Մեր այն տնտեսություններում, վորտեղ ցուլի պակասության պատճառով ստիպված են ժամանակից շուտ ոգտադործել ցուլիկներին, պլանը կազմելիս սրանց բեռնրվածությունը զուգավորման շրջանում 5—10 կովից չպետք է անցկացնել:

Վնասակար է նաև արտադրողների ուշ ոգտադործումը: Այն արտադրողները, վորոնք ժամանակից ուշ են սկսում իրենց սեռական աշխատանքը, ռանիզմով են պարապում, վորը նրանց հետագա աշխատանքի վրա վատ է ազդում:

Անասունների սեռական հասունացումը կախում ունի լավ կերակրելուց, խնամելուց, ցեղից և այլն: Տավարի տարբեր ցեղերի առաջին զուգավորումը կատարվում է տարբեր հասակից:

Մովորաբար կենդանիների սեռական հասունացումն ավելի վաղ է կատարվում. դա կախում ունի նրանց մարմնի լրիվ զարգացումից և ֆիզիոլոգիական հասունությունից:

Կենդանիների վաղաժամ զուգավորումներից խուսափելու համար, մեր կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունները 6—8 ամսականից բարձր բոլոր եզ և արու մոզիններին պետք է առանձնացնեն ու առանձին պահեն և խնամեն, հակառակ դեպքում նրանք, այդ ժամանակ արդեն սեռապես հասունանալով, կարող են զուգավորվել և անցանկալի հետևանքներ ունենալ: Իրա հետ միասին աշխատանքները պետք է այնպես կազմակերպել, վոր յերինջներն ու ցուլերն առանց ուշանալու, ճիշտ, նորմալ ժամանակին զուգավորվեն:

Փորձերով ապացուցված է, վոր բոլոր ցեղերի տավարի առաջին զուգավորումը, միջին թվով, մեկ և կես տարեկանից շուտ չպետք է կատարել: Այստեղ վորոշ շեղումներ կարելի չէ կատարել, նկատի ունենալով կենդանու անհատական զարգացումը, ցեղը և այլն:

Մեր տեղական տավարի յերինջների զուգավորումը նպատակահարմար է 20—27 ամսական հասակում, իսկ սիմենտալների և շվիցների յերինջների զուգավորումը՝ տարի մենտալների և շվիցների յերինջների զուգավորումը՝ տարի ու կեսական հասակից սկսած: Յուրաքանչյուր ցեղի տավարի արուները մոտ 3—5 ամիս եզերից շուտ են սկսում զուգավորել:

ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Ե ԶԵՌՆԲԱՇ ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄ

Կովերի ստերջությունն իսպառ վերացնելու ամենակարևոր պայմաններից մեկը ցուլերի նպատակահարմար ոգտադործումն է: Մինչդեռ մենք դեռևս ունենք կովաբուծական ֆերմաներ, անասունների զուգավորման կայաններ և այլն, վորտեղ կովերին ազատ ձևով են զուգավորում:

Այս ձևի զուգավորման ելությունն այն է, վոր ամբողջ տարին ցուլերին նախրի մեջ են թողնում: Արդյունքն այն է լինում, վոր ցուլերը խիստ հյուժվում, անպեհա-

նում են, կրնասզոււմ է նրանց սեռական աշխատանքի յերկարատեւութիւնը յետ փոխանակ 10—12 տարի աշխատելու, աշխատում են սիւայն 3—4 տարի: Նախորի մեջ զբաւնրվելով, նրանք շարունակ անհանգիստ են լինում և անհանգստութիւն են պատճառում նաև կովերին: Յուլի յեկոյ կովին մեկ անգամ ծածկելու փոխարեն ավելորդ տեղը յերբեմն 15—20 անգամ են ծածկում, այնինչ փորձը ցույց է տվել, փոր մեկ անգամ ծածկելու դեպքում բեղմնավորումն ավելի ապահովված է լինում: Ձեռնքաշ գուգավորման հետ համեմատած՝ ազատ գուգավորումը ցուլի աշխատանքի տևողութիւնը մի քանի անգամ պակասեցնում է:

Ազատ գուգավորման դեպքում հնարավոր է գուգավորումը յետ ծինը պլանավորման յենթաբեկի, կանոնավորել հաշվառման յետ տնտեսական աշխատանքներ յետ ալլն: Ազատ գուգավորման ժամանակ ցուլը կարող է զանազան վարակիչ հիվանդութիւններ տարածել և այլն:


Այս թերութիւններին վերջ տալու, ցուլերին լրիվ յետ ռացիոնալ կերպով ոգտագործելու, նրանց արտադրականութիւնը բարձրացնելու, հաշվառման, տնտեսական յետ ալլ աշխատանքներ կանոնավորելու համար մեր բոլոր անասնաբուծական տնտեսութիւններն աստիճանաբար պետք է վերջ տան ազատ գուգավորման հնարարյան ալլ ձեւին յետ անցնեն ձեռնաւ ձեւի գուգավորմանը:

Խոշոր և նորմալ ցուլի տարեկան բեռնվածութիւնը, ազատ գուգավորման դեպքում, հալատար է 30—40 կովի: Ձեռնքաշ գուգավորման դեպքում՝ ալլ թիվը կարելի է կրկնապատկել, հասցնելով 60—80 կովի: Յուլի արտադրողականութիւնն էլ ավելի յետ բարձրանում այն ժամանակ, յերբ գուգավորումը կատարվում է ձեռնաւ յետ ալլ 150—200 կով:

Այն ցուլերը, վորոնք իրենց սեռական աշխատանքն առաջին տարին են սկսում, նրանց պետք է 15—20 կո-

վից ավելի չկցել, իսկ հատունանալու հետ միասին պետք է հետզհետե կովերի թիվն ավելացնել:

Վորպետդի ցուլն ավելի յերկար ժամանակ ուղտագործվի, տասնորյակում մեկ ուր պետք է թողնել հանգստանալ:



Ձուգավորման դեպքում

և մի ուրում չպետք մեկ կովից ավելի գուգավորի: միայն բացառիկ դեպքերում կարելի է թույլ տալ ուրական յերկու անգամ գուգավորել, այն էլ մեկն առավոտյան, մյուսը յերեկոյան:

ԿՈՎԻՆ ԶՈՒԳԱՎՈՐԵԼՈՒ ԶԵՎԸ

Զուգավորումը պետք է կատարել այն ժամանակ, յերբ կովը կամ յերինջը ցուլի յեն գալիս: Կովը ցուլի գալու զեպքում իրեն շատ անհանգիստ է զգում, կաթը քչացնում է, հաճախ նախրից փախչում է, չի արածում, կենդանիների վրա յե թռչում, սեռական գործարանը կարմրում է, ցուլին հրապուրող լորձուկներնման հեղուկ է արտաթորում և այլն:

Այս յերևույթներից մեկն ու մեկը, կամ ամբողջը նկատելու զեպքում, կովին իսկույն և յեթ պետք է ցուլի մոտ տանել և զուգավորել, հակառակ զեպքում 24—36 ժամ անցնելուց հետո կովի մեջ սառնություն կառաջանա:

Իսկ յեթե այս կամ այն պատճառներով կովը չի ծածկվում կամ ծածկվելուց չի բեղմնավորվում, ապա 21—28 օրից հետո նորից է ցուլի գալիս: Այդ ժամանակ անպայման պետք է զուգավորել: Զուգավորման լավագույն ժամանակը, յերբ կարելի յե յերաշխիք ունենալ, թե բեր յեկող կովը կբեղմնավորվի, դա ցուլի գալու միջին շրջանն է— ցանկության սկզբից 10—18 ժամ հետո: Բեղմնավորվելուց հետո կովն այլևս ցուլի մոտ չի գալիս:

ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄՆ

Ինչպես վերևում հիշեցինք, մեր անասնապահական կուլեկտիվ ու խորհրդային տնտեսությունները և անասունների զուգավորման հասարակական կայանները պետք է ամեն միջոց ձեռք առնեն զուգավորումը ձեռնբաշ ձևով կատարելու:

Այս ձևով զուգավորելու զեպքում պետք է ընտրել հարմար մի տեղ՝ կողմնակի մարդկանց աղմուկից, աղաղակից հեռու, աղմուկը, աղաղակը ցուլի ուշադրությունը գրավում է և զուգավորմանը խոչընդոտ է հանդիսանում:

Զուգավորման համար ամենալավ տեղը համարվում է գոմերի, իսկ արոտներում՝ իջեվանտեղի մոտ, կամ ցուլերի ցանկապատի ներսը (յեթե այդպիսին կա):

Սոշոք և մեջքից թուլ ցուլերով զուգավորելու համար անհրաժեշտ է զուգավորման գազգյաճ շինել, վորը չափազանց հեշտ է և եժան կնտի:

Զուգավորման ժամանակ կովը պետք է դադարի մեջ տանել և ապա ցուլը բերել ու թողնել, վոր զուգավորի: Պետք է հետևել, վոր զուգավորումը ճիշտ կատարվի: Յուլի թռիչքի մոմենտին, յեթե կովի պոչը խանգարում է, մի կողմ պետք է քաշել:

Կովերի հղիությունը, միջին հաշվով, 285 օր է տևում, բայց յերբեմն զեպքեր են լինում, վոր հղիության տևողությունը տատանվում է 240—321 օրվա միջև:

Իմանալով զուգավորելու ժամանակը և հղիության միջին տևողությունը, հղիության օրացույցի միջոցով կարելի յե վորոշել կովի ծնելու ժամանակը և ծնին նախապատրաստվել:

Թե ինչպես պետք է սգտվել հղիության օրացույցից, կարելի յե տեսնել հետևյալ օրինակներից:

Յեթե կովը ծածկվել է հունվարի 20-ին, նա կծնի հոկտեմբերի 26-ին, իսկ յեթե ծածկվել է հունիսի 5-ին, կծնի մյուս տարվա մարտի 11-ին: Սակայն մի անգամ ել ենք հիշեցնում, թե կարող է պատահել, վոր նշված ժամկետից շուտ կամ ուշ ծնեն:

ՀԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԱՑՈՒՅՑԸ.

Հուլիսի ման օրը	Մեկու օրը	Հուլիսի ման օրը	Մեկու օրը	Հուլիսի ման օրը	Մեկու օրը	Հուլիսի ման օրը	Մեկու օրը
հունվար	հոկտեմ.	փետրվար	նոյեմբեր	մարտ	դեկտեմ.	ապրիլ	հունվար
1	7	1	7	1	5	1	5
5	11	5	11	5	9	5	9
10	16	10	16	10	14	10	14
15	21	15	21	15	19	15	19
20	26	20	26	20	24	20	24
25	31	25	1 դեկտ.	25	29	25	29
մայիս	փետրվար	հունիս	մարտ	հուլիս	ապրիլ	դեկտեմ.	մայիս
1	4	1	7	1	6	1	7
5	8	5	11	5	10	5	11
10	13	10	16	10	15	10	16
15	18	15	21	15	20	15	21
20	23	20	26	20	25	20	26
25	28	25	31	25	30	25	31
սեպտեմ.	հունիս	հոկտեմ.	հուլիս	նոյեմբեր	դեկտեմ.	դեկտեմ.	սեպտեմ.
1	7	1	7	1	7	1	6
5	11	5	11	5	11	5	10
10	16	10	16	10	16	10	15
15	21	15	21	15	21	15	20
20	26	20	26	20	26	20	25
25	1 հուլ.	25	31	25	31	25	30

ԱՐԶԵՍԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Կենդանու բեղմնավորման եյությունը սերմնաբջիյի և ձվաբջիյի ձուլման մեջ է կայանում: Բեղմնավորման հաջողությունը պայմանավորված է հասուն ձվաբջիյին նորմալ սերմնաբջիյներ հասցնելու հանգամանքով: Սովորաբար հասուն ձվաբջիյի մեջ մեկ սերմնաբջիյ է թափանցում, այն-ինչ զուգավորման ժամանակ ցուլը միլիոնավոր սերմնաբջիյներ է արտադրում, վորոնք անաեղի վոնչանում են: Պարզվել է, վոր, համապատասխան պայմաններ ստեղծելիս, սերմնաբջիյները կարող են ապրել բավական յերկար ժամանակ որգանիզմից դուրս՝ չկորցնելով իրենց բեղմնավորելու ունակությունը: Այդ փաստը առիթ է տվել դեռ շատ վաղ ժամանակներից ոգտագործել արու կենդանիների սերմը, արհեստականորեն սերմնավորելով բեր յեկող եգերին:

Արհեստական սերմնավորման եյությունն այն է, վոր սերմը տարբեր միջոցներով է մտցվում եգի արգանդի պարանոցը:

Արհեստական սերմնավորման ժամանակ սերմնաբջիյների հատկությունները չեն փոխվում: Արհեստական սերմնավորումը վաղուց է գործադրվել անասունների վրա, բայց իր լայն գործադրումն ոտացել է միայն Խորհրդային Միության մեջ:

Այժմ կան արհեստական սերմնավորման տարբեր ձևեր և դրա տեխնիկան որ-ավուր կատարելագործվում է:

Այս մեթոդով տոհմական արժեքավոր ցուլերին կարելի յե ոգտագործել ավելի ուսցիոնալ կերպով: Հաջողվել է զուգավորման մեկ շրջանում մեկ ցուլի սերմով 1000—1200 և ավելի կովեր սերմնավորել:

Սերմնավորման տարբեր ձևերից նկարագրենք սպունգային մեթոդը:

Այդ ձևի սերմնավորման տեխնիկան հետևյալն է. ցուլի մոտ յեկող կովերից մեկի հեշտոցի մեջ դնում են սպունգից պատրաստած սերմահավաք և ապա ցուլին բաց են

թողնում: Յուլը ծածկելուց նրա արտադրած սերմնաբջիշ-
ները ծծվում են սպունգի մեջ, փորից հետո սպունգը հա-
նում և ախտահանված հատուկ անոթի մեջ են քամում,
ապա հատուկ գործիքներով ցուլի յեկող ուրիշ կովերի
արգանդի մեջ սրկում:

Մի անգամ արտադրած սերմով կարելի չէ մի քանի
կով սերմնավորել: Սերմնավորումը կատարվում է չափազանց
զգուշությամբ, փորպեսզի կովի սեռական որգանքները
չվնասվեն:

Արհեստական սերմնավորումը լավ աղյուսակներ և
ուկնեում, յեթե բոլոր անհրաժեշտ պայմանները պահպան-
վում են, յեթե կան լավ պատշաճված կադրեր, լավ շենք
յեվ բոլոր անհրաժեշտ գործիքները:

Ամեն մի կանոն աչքաթող անելը, ինչպես 1932 թ.
Հոռվա, Ղարաղալայի և այլ խորհրդային տնտեսություն-
ներում արվեց, բարձրացնում է ստերջության տոկոսը:

Այս նկատառումով եր, փոր արհեստական սերմնավոր-
ման մասնաշաղկան կիրառումը մի տո ժամանակ արգելվեց:

Վերադաս մարմինների վորոշման համաձայն արհես-
տական սերմնավորում կարելի չէ կատարել բացառիկ
տնտեսություններում, ներմուծված և տեղական լավագույն
ցուլերից ստացված սերմով, բոլոր տեսակի կանոն-
ները նիս կիրառելով սիայն:

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍԲ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Հազվի առնել զուգավորվածներին.— Զուգավորման
հաշվառումը կատարելու համար պետք է ունենալ զուգա-
վորման գիրք, փորի մեջ պետք է նշանակել կովի №-ը և
անունը, ծածկող ցուլի №-ը և անունը, I, II և III-րդ ան-
գամ զուգավորելու օրերը, յերբ և սպասվում ծինը, և յերբ
և ծնել, հորթի սեռը և այլն:

Այս բոլորն անհրաժեշտ է, փորպեսզի իմացվի, թե
այս կամ այն հորթը, փոր և ինչպիսի ծնողներից է, զու-
գավորող ցուլը ժառանգական ինչպիսի հատկություններ
ունի և այլն: Սրա հետ միասին մյուս հաշվառումներն ել
յեթե կատարվեն, հնարավոր կլինի լավ ցուլերին ու կովե-
րին և նրանց ժառանգներին պահել, բազմացնել, իսկ վա-
տերին խոտանել:

Հաշվառումը մեր կոլեկտիվ և խորհրդային տնտեսու-
թյունների համար պարտադիր պետք է լինի:

ՑՈՒԼԻ ՊԱՍՊՈՐՏ ԿԱՄ ԲՈՒԾԱԿԱՆ ՔԱՐՏ

Ցուլի պասպորտն այն հիմնական փաստաթուղթն է,
փորն արտացոլում է նրա կյանքի ամբողջ գործունեյու-
թյունը և տարվա տոհմական աշխատանքը:

Պասպորտի (անցագրի) վերևի մասում նշանակվում է
ցուլի համարն ըստ տնտեսության, պետական տոհմական
գրքի համարը, յերբ և հաշվառման յեթարկված, ծննդա-
վայրը, տնտեսություն բերվելու ժամանակը, առաջին ան-
գամ ինչ հասակում է ծածկել. նշանակում են ցեղը, գույնը,
նշանները և այլն:

Իմանալու համար, թե ցուլն ինչպիսի տոհմական ար-
ժանիքներ ունի, պասպորտում հատուկ տեղ պետք է հա-
կացնել նրա տոհմին՝ պապերին, տատերին և ծնողներին՝
լուսաբանելով նրանց արտադրողականությունը, կենդանի
քաշը և այլն:

Պասպորտի կամ քարտի առաջին էջում պետք է գրի
առնել ցուլի մարմնի չափերը, ինչ հիվանդություններով
հիվանդացած լինելը և այլն: Քարտի յետևում պետք է
գրի առնել՝ ա) ցուլի կենդանի քաշի աճումը՝ ծնվելուց մինչև
2 տարեկան հասակը, բ) ցուլի տոհմական աշխատանքի
տարեկան տված արդյունքը, թե քանի կով է ծածկել, կո-
վերից քանիսն են ծնել և քանիսն ստերջ են մնացել, ինչ-
պես են ծնել և այլն:

Յուլի ժառանգական հատկանիշները՝ փորձելու, սե-
րունդի հատկանիշները՝ լավացնող թե վատացնող հանգա-
մանքը պարզելու համար, պասպորտի մեջ ցուլից ստացած
սերնդի միջերատվության համար հատուկ տեղ ե հատկաց-
ված: Համեմատության մեջ ե դրվում ցուլի մոր միջերա-
տվությունը (կաթնատվությունը, յուղատվությունը) նրա-
նից ստացված դուստր կովերի միջերատվության հետ:

Պասպորտի բոլոր գրանցումները կատարվում են տա-
րին մեկ անգամ ե հին քարտերը մշտապես նորերին կցելով
պահվում են:

ՅՈՒԼԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՔԱՐՏԵ

Յուլի արտադրական քարտը ցույց ե տալիս ամբողջ
նրա տարվա արտադրողականության հանրագումարը, փոր-
տեղ նշվում ե գուգավորման պլանը, նրա կատարումը ե
ցուլի կերակրումը:

Յուլը տարին մի հատ արտադրական քարտ պետք ե
ուշենա, փորը՝ լցնելուց հետո, տարվա վերջում պետք ե
կցել անցագրին ե պահել:

Նկատի ունենալով ցուլի տոհմական ընդունակու-
թյունը ե ծինը պլանային ձևով կադմակերպելը, տարվա
սկզբից ամսական գուգավորման պլան են կազմում ե նշում
ծածկվող կովերի համարները:

Յուլի կենդանի քաշը ե ծածկվող կովերի թիվը նկատի
ուշենալով, ամեն ամսի վերջում, հաջորդ ամսվա համար
որական կերի նորմաներ պետք ե կազմել ե նրանով առաջ-
նորդվել:

Ամեն ամսի վերջում գուգավորման գրքից պետք ե
տեղեկություններ վերցնել ե արտադրական քարտի մեջ
անցկացնել, իսկ տարվա վերջում արտադրական քարտի
բոլոր տվյալներն ի մի բերելով պետք ե ցուլի անցագրի
մեջ անցկացնել:

ՅՈՒԼԱՊԱՂ, ՀԻՇԻՐ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Առանց գոտեխնիկի կամ ֆերմայի վարիչի թույլ-
տրվության վոչ փոքի ցուլանոց չթողնես:

2. Գոմում մի ծխիր ե ուրիշի մի թույլ տուր ծխելու:

3. Հետևիր ցուլանոցի տաքությանը, տաքությունը Ֆել-
սիուսի ջերմաչափով 8—12 աստիճան պետք ե լինի:

4. Հետևիր ցուլանոցի ողի մաքրությանը, որը 3 ան-
գամ ողափոխիր ցուլանոցը ե մսուրները:

5. Ձեռներդ, հագուստդ մաքուր պահիր, մաքուր պա-
հիր նաե ցուլանոցը ե մսուրները:

6. Որը 3 անգամ մաքրիր ցուլերին:

7. Յուլերի շղթաներն ու վանդակները հաճախակի
ստուգիր, զգուշացիր, փոր նրանք չարձակվեն ու իրար
չխփեն:

8. Յուլերին ջրի մաքուր ջրով ե ճիշտ փորձված ժա-
մանակին:

9. Յուլերին կերակրիր ճիշտ ժամանակին ե նախա-
տեսված նորմայով:

10. Յուլերից փորեն մեկի հիվանդանալու դեպքում
հայտնի անասնաբուծին, կամ անասնաբուծին:

11. Հսկիր, փոր ցուլը կանոնավոր ոգտագործվի, նա-
խատեսված նորմայից ավել մի թույլ տուր, փոր գուգա-
վորի, հիշիր, փոր ցուլի փչացման դեպքում դու յես պա-
տասխանատու:

12. Յուլի հետ կռպիտ մի վարվիր, կռպիտ վարվելը
նրան գրգռում, կատաղի յե զարձնում:

13. Քեզ հանձնած գույքի հետ զգուշ վարվիր, իմա-
ցիր, փոր նրանց պահպանման վոջ պատասխանատու-
թյունը քեզ վրա յե ընկնում:

Գառ. խմբագիր՝ Գ. Անտոնյան
Վեճաբան՝ Արթ. Գրիգորյան

Մասն. խմբագիր՝ Ս. Թադևոսյան
Սրբազորի՝ Խ. Ավագյան

Գրավիտի լիազոր № Գ-592

Հրատ. № 184

տիրած 2000

պատվեր № 159

Հանձնվել է արտադրության 1935 թ. մարտի 4-ին
Ստորագրված է տպագրելու 1935 թ. մարտի 17-ին

Գյուղերաբն. տպարան, Յերևան, Նալբանդյան 50

ՀՀ Ազգային գրադարան



NL0295809

ՀԻՆԵ 30 409.

21.224

Арм.

3-1548



В. Ханбабян

Бук и его использование

Сельхозгиз

1935

Эривань